ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԵՔ-ԴՄ- 05

ք. Երևան 15.10. 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ն, ի դեմս ՀԿ-ի ղեկավար՝ Լիանա Մարգարյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115 Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001 Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 10-ի «Կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» N 1692-Ա/2 հրամանը, Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհների հատկացման մրցույթի հանձնաժողովի 24.09.2021թ. N 04/21 արձանագրությունը «Երիտասարդների կարողությունների հզորացում՝ ուղղված Սևանա լճի պահպանությանը» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 2448.0 հազար (երկու միլիոն չորս հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ

վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. Կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարվելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.11. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1 կետում սահմանված գումարի 80%-ը կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

5.2. Համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է

նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման և հաշվետվությունների ընդունման ժամկետը մինչև 2021 թ. դեկտեմբերի 15-ն է:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ
ք.Երևան, Բագրատունյաց 28, 51 բն.
liana_margaryan@yahoo.com

բանկ ՝ Հայէկոնոմբանկմ/6 հասցե՝

Գարեգին Նժդեհի 28

Հ/Հ163018361564, ՀՎՀՀ0225154

ՀԿ-ի ղեկավար՝

Լիանա Մարգարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 1
2021թ. հունվարի 15 -ին
կնքված N ԵՔ-ԴՄ- 09 պայմանագրի

«Երիտասարդների կարողությունների հզորացում՝ ուղղված Սևանա լճի պահպանությանը» դրամաշնորհային ծրագրի

Ծրագրի նկարագրություն

Սևանա լիճը Հայաստանի հանրապետության, ինչպես նաև ողջ Հարավային Կովկասի տարածաշրջանի համար ռազմավարական նշանակություն ունեցող քաղցրահամ ջրային էկոհամակարգ է: Այն հանդիսանում է Հարավային Կովկասի տարածաշրջանում քաղցրահամ ջրի և ձկնատեսակների կարևորագույն աղբյուրներից մեկը, էական ներդրում ունի ՀՀ տնտեսության մեջ: Լճի ջրերն օգտագործվում են Արարատյան դաշտի ոռոգման գործում, ինչպես նաև լիճն մեծ դեր ունի հանրապետությունում հիդրոէներգետիկայի, ռեկրեացիայի և տուրիզմի զարգացման համար: Սևանա լիճն ունի հարուստ կենսաբազմազանություն, ինչպես նաև բարձր մասնաբաժին են կազմում բուսական ու կենդանական աշխարհի էնդեմիկ տեսակները:

Սևանա լճի ջրի մակարդակն և մակերեսն անցյալ դարի ընթացքում զգալիորեն փոխվել են՝ պայմանավորված բազմաթիվ մարդածին ազդեցություններով: Այս տատանումները հանգեցրել են լճի ջրի որակի ու էկոհամակարգի փոփոխությունների, և արդյունքում էվտրոֆիկացման գործընթացների ակտիվացման: 1930-ականներին առաջին անգամ դիտվեց լճի «ծաղկում» և սկսվեց այսպես կոչված «մարդածին էվտրոֆիկացիա» (մարդու գործունեության արդյունքում լճի վաղաժամ ծերացում):

1970-ականներից ի վեր շարունակվում են Սևանա լճի էկոհամակարգի վերականգնմանն ուղղված բնապահպանական միջոցառումների իրականացումը, մասնավորապես՝ ջրի մակարդակի բարձրացում, պայքար ապրինի ձկնորսության դեմ: Սակայն լճի էկոլոգիական վիճակը շարունակում է վատթարանալ: Չնայած ջրի մակարդակի բարձրացմանը, Սևանա լճի ջրի որակը չի բարելավվել և էվտրոֆիկացման գործընթացները դեռևս ակտիվ են՝ կեղտաջրերի միջոցով լիճ թափվող սննդանյութերի, օրգանական միացությունների բարձր մակարդակի, գետերով ներհոսելով և տուրիզմով պայմանավորված կենցաղային թափոններով աղտոտվածության, ջրի տակ անցնող ափամերձ տարածքների ոչ լիարժեք մարքման և այլ պատճառներով:

2020թ-ին «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ի և ԿԶՆ-ների համար Երիտասարդական կոալիցիայի հետ համատեղ ՀՀ-ում իրականացրած առցանց հարցման արդյունքում պարզվել է, որ հարցվածների 93,5%-ը կարծում է, որ Սևանա լիճն ունի էկոլոգիական խնդիր, սակայն միայն 48,7%-ն է գտնում, որ լիճը կանգնած է էկոլոգիական աղետի առջև պայմանավորված մարդու գործունեությամբ: Սոցիալական հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ բնակչությունը, հատկապես երիտասարդ սերունդը, վատատեղյակ է Սևանա լճի էկոլոգիական խնդրին, ինչպես նաև տեղյակ չէ լճի «ծաղկման» նախադրյալներից և լճի ջրի մակարդակի բարձրացման կարևորության մասին: Հարցվածների կարծիքով Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման և պահպանմանն ուղղված միջոցառումների անարդյունավետության հիմնական պատճառը հասարակության անտարբերությունն է: Բացի այդ, երիտասարդ սերունդը (երիտասարդներ, դպրոցականներ)

չունի բավարար տեխնիկական ներուժ և գիտելիքներ՝ Սևանա լճի էկոհամակարգի բարելավմանն ուղղված գործողություններ ձեռնարկելու կամ մասնակցելու համար:

Այս նպատակով ծրագրում նախատեսվում է ՀՀ մարզերի երիտասարդների լայն շրջանի համար կազմակերպել թեմատիկ սեմինարներ և քննարկումներ, երիտասարներին զինելով համապատասխան գիտելիքներով և միջազգային փորձի իմացությամբ: Ծրագրում երիտասարդների լայն մասնակցությունն ապահովելու համար կներգրավվեն մարզերի դպրոցները, կկիրառվեն ինտերակտիվ և հետաքրքրաշարժ կրթական մեթոդներ, ինչպիսիք են վիկտորինաները, անիմացիոն պրեզենտացիաները, էկո-կրթական ժամանցային խաղի վիզուալ կոմպոզիցիա և այլն: Ծրագրային թիմը մասնակցության հրավերներ կուղարկի իր գործընկեր 240 դպրոցներին, ինչպես նաև կապահովի ծրագրի լայն լուսաբանում սոց ցանցերում՝ այլ դպրոցներ ընդգրկելու նպատակով: Մասնակից դպրոցներին կտրամադրվեն բոլոր տեղեկատվական նյութերը, խաղերը, պրեզենտացիաները՝ ծրագրի ավարտից այլ դասարանների աշակերտների համար նմանատիպ բաց դասեր կազմակերպելու համար:

Սեմինարների/վեբինարների մասնակիցները հնարավորություն կունենան ծանոթանալ և շփվել ոլորտի առաջատար և միջազգային փորձ ունեցող մասնագետների հետ, ովքեր կկիսվեն իրենց փորձառությամբ, գիտելիքներով, կծանոթացնեն Սևանա լճի կառավարման հարցերին: Վեբինարների ընթացքում կշարունակվի երիտասարդ մանկավարժներից բաղկացած «դպրոց-բուհ» համագործակցության հարթակի ամրապնդումը՝ քննարկումներին մասնակից դարձնելով նաև ուսանողներին և մանկավարժներին: Վեբինարներից հետո ծրագրային թիմը և հրավիրված փորձագետները կաջակցեն դպրոցների մանկավարժներին իրենց դպրոցներում սեփական նախաձեռնություններով Սևանա լճի հիմնախնդրին ուղղված բաց դասերի և քննարկումների կազմերպմանը՝ դրանով իսկ ապահովելով ծրագրի կայունությունն ու շարունակականությունը:

Շարունակելով հզորացնել ՀՀ մարզերի և Երևանի երիտասարդների էկո-կրթությանը նպաստող կարողությունները, ծրագրի ավարտական փուլին նախատեսվում է կազմակերպել «Սևանը ես եմ» խորագրով մրցույթը: Մրցույթի մասնակիցներն կլինեն ՀՀ բոլոր մարզերի դպրոցների տարբեր դասարանների աշակերտները՝ յուրաքանչյուր դպրոցից 1 խումբ, ովքեր հնարավորություն կունենան հանրությանը ներկայացնել Սևանա լճի հիմնախնդիրը կրեատիվ պաստառի կամ ֆոտոկոլաժի միջոցով: Մրցույթը կխրախուսի ոչ միայն աշակերտների այլ նաև երիտասարդ մանկավարժների և ողջ հանրության հետաքրքրության բարձրամանը Սևանա լճի հիմնախնդրի լուծման գործում:

Մրցույթի իրականացման համար կստեղծվի պրոֆեսիոնալ մասնագետներից բաղկացած հանձնաժողով, կշմակվեն ընտրության չափորոշիչներ, ժամկետներ, քվերակության մեխանիզմներ, 2-3 անվանակարգերում հաղթողներին ՀԿ-ի գործընկեր «Գեոինֆո» ընկերության կողմից կտրամադրվեն հուշանվերներ:

Ծրագրի ավարտից հետո, ՀԿ-ի գործընկեր «Գեոինֆո» ընկերության կողմից ֆինանսական աջակցությամբ կկազմակերպվեն շրջայցեր մասնակից դպրոցներ, որի ժամանակ մասնակիցներին կտրամադրվեն տեղեկատվական նյութերը, ձեռնարկները, մասնակցության վկայագրեր և մրցանակները:

Ծրագրի գործողությունների մանրամասն նկարագիրը տրված է ստորև՝ «Գործողություններ» բաժնում:

Կազմակերպության փորձառությունը

«Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ի առաքելությունն ուղղված է երիտասարդների մասնակցության խթանմանը բնապահպանական խնդիրների լուծման և որոշումների կայացման հարցերում: Կազմակերպության նպատակներն են Երկրում նորարարական կանաչ գաղափարների և լուծումների ներդրումը, երիտասարդության դերի ու կարողությունների, էկո-կրթության, իրազեկվածության մակարդակի բարձրացում՝ ուղղված բնապահպանական խնդիրների լուծմանը:

ՀԿ-ն հանդես է գալիս կրատիվ գաղափարներով, որոնք հիմնված են միջազգային լավագույն փորձի ու գիտական ըմբռնման վրա: Երկրում իրազեկման և էկո-կրթության մակարդակի բարձրացման նպատակով ՀԿ-ն առաջարկում է ոչ-ֆորմալ կրթական մեխանիզմներ՝ հիմնված ուսուցողական ժամանցային խաղերի, անիմացիոն պրեզենտացիաների վրա, որոնք բնապահպանական գիտելիքները դարձնում են դյուրամատչելի և ըմբռնելի ցանկացած տարիքի ու մտավոր ունակություններով մասնակիցների համար:

Բնապահպանական հարցերում երիտասարդների բարձրացման նպատակով ՀԿ-ն իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնցից են.

1. 2019թ-ի դեկտեմբերի 1-15-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսական աջակցությամբ իրականացված «Էկոկրթության խթանում երիտասարդության շրջանում ոչ ֆորմալ ուսուցման մեխանիզմների կիրառմամբ» ծրագիր (*պայմանագրի պատճեն կցված է*): Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 530 760 ՀՀ դրամ, որից 479 760 ՀՀ դրամը հայցվել է ֆինանսատուի կողմից և 51000 ՀՀ դրամ ՀԿ-ի կողմից ներդրում:

Ծրագրի նպատակն էր խթանել Արմավիրի, Արարատի մարզերի և Երևանի մի շարք դպրոցներում, ինչպես նաև բուհերում ոչ մասնագետների էկոկրթության զարգացմանը և երիտասարդության ակտիվ ներգրավմանը բնապահպանական միջոցառումներին:

Ծրագրի շրջանակներում ձևավորվել է «դպրոց-բուհ» երկկողմանի համագործակցության երիտասարդական հարթակը և շուրջ 17 մասնակից մասնակցել են բնապահպանական թեմաներով դասընթացներին: «Դպրոց-բուհ» հարթակը ծրագրի ընթացքում ձևավորման պահին բաղկացած է եղել 30 մասնակցից, իսկ ծրագրի ավարտից հետո, ՀԿ-ի շարունակական գործունեության արդյունքում հասել է մինչև 240-ի:

2. 2020թ-ի մայիսի 15 - հոկտեմբերի 30-ը Հայաստանում Չեխիայի Հանրապետության դեսպանության ֆինանսական աջակցությամբ իրականացված «***Երիտասարդների կարողությունների զարգացում գյուղական համայնքի զարգացմանը և ԿՀՆ-ների իրականացմանն ընդառաջ***» ծրագիր (*պայմանագրի պատճեն կցված է*): Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 391 274 CZK (չեխական կրոն)՝ համարժեք 8 021 115 ՀՀ դրամին, որից 240 000 CZK (4 920 000 ՀՀ դրամ) տրվել է ֆինանսատուի կողմից, իսկ 151 274 CZK (3 101 117 ՀՀ դրամ)՝ ներդրում Արտաբույնքի համայնքի ու ՀԿ-ի կողմից:

Ծրագրի նպատակն էր տեղական մակարդակով նպաստել Եղեգիս համայնքի զարգացմանը՝ Արտաբույնքի բնակավայրում խաղահրապարակի կառուցման, շրջակա միջավայրի խնդիրների մասին հանրային իրազեկվածության բարձրացման և հանրային առողջության բարելավման միջոցով: Ծրագիրն ուղղված էր խթանելու երիտասարդների մասնակցությունն իրենց համայնքի զարգացման և շրջակա միջավայրի պահպանության գործում:

Ծրագրի արդյունքում Եղեգիսի Արտաբույնքի բնակավայրում ավագանու որոշմամբ հատկացված 0,20982 հա հողատարածքի վրա նախագծվել և կառուցվել է էկո-կրթական խաղահրապարակ: Խաղահրապարակը համալրվել է մանկական ճոճանակներով, կառուցվել է ջրախնայող էկո-լճակ, փոքրիկ անկյուն երիտասարդ գիտնականների համար և մրցումային գոտի: Համայնքի աջակցությամբ (ներդրմամբ) իրականացվել է խաղահրապարակում ջրի խողովակների մոնտաժում, ճոճանակների տեղադրման, լճակի կառուցման համար աշխատուժի և շինանյութի տրամադրում: Խաղահրապարակի կառուցումից հետո ՀԿ-ի ներդրումներով իրականացվել է ծառատունկ:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք սեմինարներ, քննարկումներ, դասընթացներ համայնքի երեխաների և երիտասարդության համար, պատրաստվել և բաժանվել են տեղեկատվական նյութեր, էկո-կրթական խաղեր, մշակվել է «Միասին կառուցենք մեր էկո-այգին» ուղեցույցը դպրոցականների համար: Պատրաստվել են ծրագրային գործողությունների վերաբերյալ երկու տեսահոլովակ՝ https://www.youtube.com/watch?v=49rSQA-zpfA&t=4s և https://www.youtube.com/watch?v=vPRXZp8_ER8&t=33s:

3. 2020թ-ի օգոստոսի 10 – դեկտեմբերի 10-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսական աջակցությամբ իրականացված «Երիտասարդները հանուն աղբից մաքուր մոլորակի» ծրագիր (*պայմանագրի պարտեն կցված է*): Ծրագրի իրականացման համար ԿԳՄՍ նախարարությունը տրամադրել է 4 392 000 ՀՀ դրամ և ևս 120 000 ՀՀ դրամ համաֆինանսավորվել է ՀՀ օզոնի ծրագրի և ՀԿ-ի կողմից:

Ծրագրի նպատակն էր երիտասարդության շրջանում բարձրացնել էկո-կրթության մակարդակը և խթանել երիտասարդների դերը բնապահպանական խնդիրների լուծման գործում: Ծրագիրն ուղղված էր՝ տեղական և ազգային մակարդակով միավորելու երիտասարդ մանկավարժներին և աշակերտներին բնապահպանական հիմնախնդիրների շուրջ, ներկայացնելու ոչ-ֆորմալ էկո-ուսուցողական ժամանցային խաղեր, ամրապնդել «դպրոց-բուհ» ակտիվ երկկողմանի համագործակցությունը, որը կնպաստի հանրության շրջանում էկո-կրթության բարձրացմանը և երիտասարդ բնապահպան մասնագետների պատրաստմանը:

Ծրագրի արդյունքում դպրոցի ու բուհերի երիտասարդ մանկավարժների համար կկազմակերպվել են 2 թեմատիկ վեբինարներ, կազմվել և մասնակիցներին ուղարկվել են տեղեկատվական նյութերի փաթեթներ, ՀՀ մարզերի և Երևանի դպրոցների շուրջ 72 աշակերտների համար կազմակերպվել են 16 բաց դասեր զում հարթակում, մշակվել և ծրագրավորվել է երկու էկո-ուսուցողական ժամանցային օնլայն խաղ (http://games.envhealth.am/), դպրոցականների համար կազմակերպվել է «Աղբից մաքուր մոլորակ» թեմայով օնլայն-մրցույթը և մրցանակաբաշխություն, ինչպես նաև նկարահանվել է «Բնապահպանական խնդիրները և լուծումները դպրոցականների աչքերով» կարճամետրաժ տեսաֆիլմը՝ https://www.youtube.com/watch?v=iMQgrUUV20g&t=83s:

«Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ն ակտիվորեն համագործակցում է նաև պետական հաստատությունների, ՏԻՄ-երի, բուհերի, Երևանի և ՀՀ մարզերի մի շարք դպրոցների, տեղական և ազգային ՀԿ-ների հետ՝ շրջակա միջավայրի պահպանության, հանրային առողջության, հանրության մասնակցության, կրթության, կայուն զարգացման ոլորտում: Մեր հիմնական գործընկերներն է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության

Օզոնի ազգային կենտրոնը, որի հետ համատեղ 2014թ-ից ի վեր ՀԿ-ն իրականացնում է իրազեկման արշավներ:

Ներկայում ՀԿ-ն համագործակցության շրջանակներում ընդգրկված է ՀՀ Օզոնի ծրագրի կողմից իրականացվող «Լինենք իրազեկ, պահպանենք օզոնային շերտը» նախաձեռնությունում և «Գեոինֆո» ՍՊԸ-ի կողմից իրականացվող «Արևիք» ազգային պարկ և «Բողաքար» պետական արգելավայր պահպանվող տարածքների համար կառավարման պլանների մշակման աշխատանքներում *(համապատասխան տեղեկանքն ու երաշխավորագիրը կցված են)*:

ՀԿ-ն նշանակալի փորձառություն ունի էկոկրթական ծրագրերի, բնապահպանական վեբինարների, դասընթացների, մասնագետների վերապատրաստումների կազմակերպման և իրականացման հարցում: Իր ծրագրերում մշտապես ընդգրկում է տվյալ ոլորտի բարձրակարգ մասնագետներ, ինչը նպաստում է ծրագրերի արդյունավետությանը և բարձր արդյունքներին:

ՀԿ-ն իր գործունեության շրջանակներում մշակել է «Ածխածնի շրջանառությունը», «Կառավարում ենք ջրային ռեսուրսները», «Ջրի գույները», «ԷկոՇուտՀասիկ» և «ԷկոՇտապիկ» թեմատիկ խաղերը: Վերը նշված խաղերը ներկայացվել են բուհերին, դպրոցներին, ՀԿ-ներին, և հանդիսանում սիրված ժամանցային խաղեր բազում աշակերտների ու ուսանողների համար (*տե՛ս կից կանոնադրության պատճեն, պետական ռեգիստրի վկայականը, երաշխավորագիրը*):

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

«Երիտասարդների կարողությունների հզորացում՝ ուղղված Սևանա լճի պահպանությանը» ծրագրի նպատակն է մեծացնել ՀՀ մարզերի երիտասարդության կարողությունն ու գիտելիքները Սևանա լճի էկոլոգիական խնդրի վերաբերյալ, դրանով իսկ խթանելով երիտասարդների ակտիվ ներգրավվածությունը լճի էկոհամակարգի վերականգնման գործողություններում:

Ծրագրի խնդիրներն են՝

- ՀՀ մարզերի երիտասարդության շրջանում բարձրացնել Սևանա լճի հիմնախնդրի վերաբերյալ իմացության մակարդակը դյուրամատչելի եղանակներով՝ կիրառելով ոչ-ֆորմալ կրթական մեխանիզմներ;
- ՀՀ մարզերի երիտասարդներին ներկայացնել Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման հանրամատչելի գործողություններ՝ հիմնված միջազգային լավագույն փորձի օրինակների վրա;
- տեղական և ազգային մակարդակով միավորել ՀՀ մարզերի աշակերտներին և երիտասարդ մանկավարժներին Սևանա լճի էկոլոգիական հիմնախնդիրների շուրջ՝ ստեղծելով միասնական գործողությունների համախումբ:

Ծրագրի ադյունքում, կմշակվեն տեղեկատվական նյութեր ջրային ռեսուրսների կարևորության և դրանց պահպանման անհրաժեշտության մասին, Սևանա լճի էկոլոգիական պատմության և հիմնախնդրի զարգացման վերաբերյալ, կպատրաստվեն «Սևանա լճի հիմնախնդիրն ու արդի լուծումները» և «Ջրախնայող տեխնոլոգիաներ և նորարարական լուծումներ Սևանա լճի պահպանության համար» ուղեցույցները:

Ծրագրի շրջանակներում կմշակվի էկո-կրթական ժամանցային խաղի վիզուալ կոմպոզիցիա, որը ինտերակտիվ տարբերակով կներկայացնի ջրային ռեսուրսների և Սևանա լճի խնդիրը՝ խաղային տարբերակով մասնակիցներին սովորեցնելով խնայել և պահպանել ջուրը:

Բացի այդ, ՀՀ մարզերի դպրոցների 7-11-րդ դասարանների աշակերտների և ուսուցիչների համար կկազմակերպվեն «Ջուրը մեր կյանքում» և «Օգնենք Սևանա լճին» թեմաներով վեբինարների շարք, կիրականացվի նաև երկու սեմինար քննարկում՝ նվիրված Սևանա լճի հիմնախնդրին, արդի գիտական լուծումներին և լճի էկոհամակարգի վերականգնման համար ջրախնայող ու նորարարական տեխնոլոգիական լուծումներին:

Ծրագրի ավարտին կկազմակերպվի «Սևանը ես եմ» խորագրով մրցույթը դպրոցականների համար: Մրցույթի շրջանակներում մասնակից դպրոցների աշակերտները՝ մանկավարժի աջակցությամբ, իրենց համայնքներում կիրականացնեն Սևանա լճի վերաբերյալ սոցիալական հարցումներ, որոնց արդյունքների հիման վրա կպատրաստեն ու մրցույթին կներկայացնեն պաստառ կամ ֆոտոկոլաժ:

Ծրագրի գործողությունների արդյունքում երիտասարդների շնորհիվ Սևանա լճի հիմնախնդիրը լայնորեն կլուսաբանվի երկրի ողջ մասշտաբով:

Գործողություններ

Ծրագրի ընթացքում նախատեսվում է գործողությունների փոխկապակցված համալիր կազմակերպում, որն ուղղված կլինի ծրագրի նպատակին և խնդիրներին հասնելուն:

- ՀՀ մարզերի երիտասարդության շրջանում Սևանա լճի հիմնախնդրի վերաբերյալ գիտելիքների և իմացության մակարդակի բարձրացման նպատակով ծրագրի փորձագետների կողմից կպատրաստվեն մի շարք տեղեկատվական նյութեր և կկազմակերպվեն մինչև 5 վեբինարներ, շուրջ 80 մասնակիցների համար: Վեբինարները նվիրված կլինեն ջրային ռեսուրսների և Սևանա լճի հիմնախնդիրների նկարագրությանը: Տեղեկատվության հեշտ ըմբռնման նպատակով կկիրառվեն ոչ-ֆորմալ կրթական մեխանիզմներ: Վեբինարների նյութերը պատրաստված կլինեն անիմացոն պրեզենտացիաների տեսքով, որին կհետևի առցանց վիկտորինա-խաղի կազմակերպումը՝ տրամադրված նյութը հեշտ հիշելու նպատակով: Բացի այդ, մասնակիցների համար կպատրաստվի էկո-կրթական ժամանցային խաղի գրաֆիկական կոմպոզիցիա, որի տպագիր տարբերակը ևս կտրամադրվի: Վերջինիս օգնությամբ մասնակիցները հնարավորություն կունենան դպրոցում ազատ ժամերին խաղալ և սովորել ջրային ռեսուրսների պահպանության վերաբերյալ: ՀՀ մարզերի երիտասարդներին մեկ գաղափարի և նպատակի (Սևանա լճի պահպանության) շուրջ համախմբելու նպատակով վեբինարներին միևնույն ժամանակ մասնակցություն կունենան տարբեր մարզերի և դպրոցների մասնակիցներ:
- Ծրագրի երկրորդ խնդրի լուծման նպատակով կկազմակերպվեն երկու թեմատիկ սեմինար-քննարկումներ: Սեմինարները ևս կկազմակերպվեն առցանց՝ ԿՈՎԻԴ համավարաքի ռիսկերը նվազագույնի հասցնելու նկատառումներից ելնելով: Սեմինարներին հնարավորություն կունենան մասնակցել ծրագրի բոլոր շահառու կողմերը: Սեմինարները նվիրված կլինեն ջրախնայող լուծումներին, ոռոգման խելացի համակարգերի ներդրմանը, Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման հանրամատչելի գործողությունների իրականացմանը, և նմանատիպ այլ հարցերին:

Սեմինարները հետաքրքրաշարժ դարձնելու նպատակով կներկայացվեն անիմացոն և ֆոտո նկարների շարքերի միջոցով, կլինի ակտիվ քննարկում շահագրգիռների միջև: Նախատեսվում է սեմինարների շուրջ 50 մասնակից:

- Տեղական և ազգային մակարդակով ՀՀ մարզերի աշակերտներին և երիտասարդ մանկավարժներին միավորելու նպատակով կկազմակերպվի «Սևանը ես եմ» խորագրով մրցույթը: Մրցույթին հնարավորություն կունենան մասնակցել ՀՀ մարզերի դպրոցների աշակերտներից բաղկացած խմբերը: Յուրաքանչյուր դպրոց կկարողանա ներկայացնել միայն մեկ հայտ: Կխրախուսվի երկու և ավել դպրոցների կողմից մեկ միասնական հայտի ներկայացումը՝ ինչը կդիտվի գաղափարի շուրջ երիտասարդների համախմբման արդյունք: Մրցույթի իրականացման և ծրագրի գործողությունների ընդլայնման նպատակով, ծրագրի թիմը կպատրաստի և դպրոցներին կհանձնի սոց-հարցման հարցաթերթիկներ՝ նվիրված Սևանա լճի հիմնախնդրին: Մրցույթին մասնակից դպրոցներն ըստ տրամադրված հարցաթերթիկների իրենց համայնքներում կկազմակերպեն հարցումներ բնակչության տարբեր տարիքային խմբերի համար, ինչպես նաև կպատմեն Սևանա լճի հիմնախնդրի մասին: Սոց հարցումների արդյունքների հիման վրա մասնակից խմբերը կպատրաստեն պաստառներ և/կամ ֆոտոկոլաժներ և կներկայացնեն մրցույթային հանձնաժողովին:

  Մրցույթային հայտերի դիտարկման ժամանակ խրախուսական կդիտվի վեբինարներից հետո դպրոցներում սեփական նախաձեռնություններով նմանատիպ բաց դասերի կազմակերպումը: Ծրագիրը կաջակցի նման դասերի կազմակերպմանը և կշնորհի լրացուցիչ միավորներ մրցույթային հայտերը դիտարկելիս:

  Մրցույթի հայտերը կտեղադրվեն սոց հարթակներում՝ հանրության քվերակության համար: Մրցանակաբաշխության արդյունքում հանձնաժողովի գնահատմամբ կողմից կորոշվի 1-ին անվանակարգում հաղթողը, իսկ հանրային քվերկությամբ կորոշվի 2-րդ անվանակարգում հաղթողը: Հաղթողներին կտրամադրվեն հուշանվերներ: Մրցույթին մասնակցած բոլոր դպրոցները կստանան մասնակցության վկայականներ:

Ամսական կտրվածքով աշխատանքային պլանը բերված է ստորև ըստ տրված ձևաչափի:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Ժամանակահատված ***հոկտեմբերի 15- դեկտեմբերի 15, 2021թ.***

...ություն	Պատասխանատու	Ամիս		
		1 հոկտեմբեր	2 նոյեմբեր	3 դեկտեմբեր
...մեկնարկի մասին լուսաբանում էլ կայքերում, սոց. ցանցերում ...երի ուղարկում ուսումնական հաստա-տություններ: Ծրագրին ...ցության հայտերի ստացում դպրոցների կողմից: Աշխատանքային ...ավորում՝ պայմանագրերի կազմում, գրանցում:	Ծրագրի համակարգող			
...ռեսուրսների գլոբալ էկոլոգիական խնդրի վերաբերյալ ...տվական նյութերի, անիմացիոն պրեզենտացիայի և էլեկտրոնային ...ակով վիկտորինա-խաղի պատրաստում (1 փաթեթ)	Ծրագրի Շրջակա միջավայրի փորձագետ			
...ջի էկոլոգիական վիճակի վերաբերյալ սոցիալական հարցման ...երթիկների պատրաստում և տրամադրում ծրագրին մասնակցող ...երին:	Ծրագրի օգնական			
...ջի հիմնախնդրի ու արդի գիտական լուծումների վերաբերյալ էկո ...տվական նյութի, պրեզենտացիայի պատրաստում (1 փաթեթ):	Ծրագրի գյուղատնտեսության փորձագետ և Ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ			
...այող տեխնոլոգիաներ և նորարարական լուծումներ Սևանա լճի ...նության համար» տեղեկատվական նյութերի պատրաստում և ...ո-քննարկման իրականացում:	Ծրագրի գյուղատնտեսության փորձագետ և Ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ			
...ային էկո-կրթական խաղի (ջրային ռեսուրսների էկոլոգիական ...ությամբ) պատրաստում (լրավանդակություն, կառուցվածք):	Ծրագրի Շրջակա միջավայրի փորձագետ, Ծրագրի Ջրային ռեսուրսների կառավարման տորձագետ, Ծրագրի գյուղատնտեսության փորձագետ			
...ական ժամանցային խաղի վիզուալ կոմպոզիցիայի ստեղծում, ...ական դիզայն և իլյուստրատոր ծրագրով խաղի իրականացում:	Ծրագրի համակարգող, «Անաշեն Հաղվերդյան» ԱՁ			
...*ներ կյանքում»* և *«Օգնենք Սևանա լճին»* թեմաներով վեբինարների ...երպում դպրոցի մանկավարժների և 7-11-րդ դասարանների ...տների համար:	Շրջակա միջավայրի փորձագետ			
...կանների համար *"Սևանը ես եմ"* խորագրով մրցույթի ...ատրաստական աշխատանքներ, մրցույթի մեկնարկ, ...արության տարածում, հայտերի ու գնահատման ձևանմուշների ...ստում, ընտրական հանձնաժողովի ձևավորում, մրցույթային ...քների ամփոփում:	Ծրագրի համակարգող, Ծրագրի օգնական			
...արդյունքների լուսաբանում էլ. կայքերում և սոց. հարթակներում	Կայքի ադմինիստրատոր			
...ր ծրագրի մասնակից դպրոցներ՝ տեղեկատվական նյութերի և էկո-...ն խաղի տրամադրման, վկայագրերի, մրցանակների հանձնման ...կով:	Ծրագրի օգնական			
...հաշվետվությունների և կատարողականների կազմում	Ծրագրի համակարգող, Ծրագրի հաշվապահ			

Ծրագրի շահառուները և շահագրգիռ կողմերը

Ծրագրի շահառուներն են ՀՀ մազերի և Երևանի դպրոցների 7-11-րդ դասարանի աշակերտները և բնագիտական առարկաների գծով մանկավարժները: Նախատեսվում է մինչև 80 մասնակիցների ակտիվ ներգրավվում ծրագրի կողմից կազմակերպվող վեբինարներին և քննարկումներին: Ծրագրի անմիջական շահառուներն են ՀՀ մարզերի դպրոցների աշակերտները, որոնք կմասնակցեն իրականացվող վեբինարներին, առցանց խաղերին և վիկտորինաներին: Բացի այդ, անմիջական շահառուների համար կկազմակերպվի «Սևանը ես եմ» խորագրով մրցույթը:
Շրագրի շահագիգիռ կողմերն են Երևանի և ՀՀ մարզերի դպրոցները, բուհերը, ակտիվիստները, գիտահետազոտական խմբերը, տեղական ՀԿ-ներ, Սևանա լճի հիմնախնդրով մտահոգված քաղաքացիները և այլն:Շահագրգիռ կողմերը հնարավորություն կունենան մասնակցելու կազմակերպվող սեմինար-քննարկումներին և ծանոթանալ լճի էկոհամակարգի վերկանգնմանն ուղղված արդի լուծումներին: Բացի այդ, բոլոր շահագրգիռ կողմերին կներկայացվեն «Սևանը ես եմ» խորագրով մրցույթի աշխատանքները և կողմերը կկարողանան մասնակցել հանրային քվերակության:
Շահառուների ակտիվ մասնակցության համար կիրականացվի հետաքրքրության հրավեր-նամակի ուղարկում, տեղեկատվության տարածում սոց-կայքերում, գործընկեր կազմակերպությունների էլ. կայքերում:

Ռիսկերի գնահատում

Ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը բացակայում են, քանի որ միջոցառումները կազմակերպվելու են առցանց տարբերակով, աշակերտների դասաժամերից հետո, չեն խանգարելու ուսումնական գործընթացին: Ծրագրի գործողություններին մասնակցության հետաքրքրությունն ու շահագրգռվածությունն ապահովելու են ինտերակտիվ մոտեցումները՝ վիկտորինաների, խաղերի և «Սևանը ես եմ» մրցույթի կազմակերպումը և մրցանակների տրամադրումը:

Ծրագրի աշխատակազմը

Ծրագրի համակարգող՝ Լիանա Մարգարյան, ունի 15 տարվա աշխատանքային փորձ ջրային ոլորտում (ջրային ռեսուրսների կառավարում, պլանավորում, ջրի որակի մոնիտորինգ և գնահատում) և 11 տարվա գիտական և մանկավարժական փորձ Երևանի պետական համալսարանում: Մինչ 2014թ աշխատել է ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում որպես գիտական հարցերով փոխտնօրեն, իսկ 2014թ-ից սկսած ընդգրկված է USAID, UNIDO, UNOPS, GIZ, KfW, EU կողմից ֆինանսավորվող միջազգային գիտահետազոտական, նախագծային, խորհրդատվական, ջրային ռեսուրսների կառավարման պլանավորման, ջրի որակի ուսումնասիրման և գնահատման ծրագրերում՝ որպես համայնքային իրազեկման համակարգող, ջրի որակի փորձագետ, դասընթացավար և այլն:
2014թ-ին ստացել է դոցենտի կոչում գեո-էկոլոգիայի բնագավառում, իսկ 2018թ-ի՝ տեխնիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Վերապատրաստվել է միջազգային տարբեր համալսարաններում: Հանդիսանում է 87 գիտական հոդվածների հեղինակ, այդ թվում՝ 2 ուսումնամեթոդական ձեռնարկներ, 3 արտոնագրեր և 3 մենագրություն:

Ծրագրում պատասխանատու է ծրագրի համակարգման, գործողությունների պատշաճ և ժամանակին իրականացմանը, էկոկրթական խաղերի և տեղեկատվական նյութերի փաթեթի կազմման համար: Որպես ոլորտի մասնագետ պատասխանատու է լինելու նաև տեղեկատվական նյութերի կազմման, թեմատիկ սեմինարների ժամանակ քննարկումների պատշաճ իրականացման, ծրագրային հաշվետվությունների կազմման համար *(CV-ին կցված է):*

Հաշվապահ՝ Կարինե Ղարիբյան, ունի 22 տարվա աշխատանքային փորձ հաշվապահության բնագավառում: Որպես հաշվապահ ընդգրկված է եղել մի շարք միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերում: 2015թ-ից մինչ այսօր հաշվապահական գործունեություն է իրականացնում Վայրի Բնության և մշակույթային արժեքների պահպանման հիմնադրամում: Աշխատանքային գործունեության շրջանակներում ներգրավված է ֆինանսական վճարումների, միջազգային և տեղական կազմակերպություններից գնումների իրականացման, պայմանագրերի կնքման և եռամսյակային/տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմման աշխատանքներին: Ծրագրում պատասխանատու է գնումների կազմակերպման, պայմանագրերի կնքման, վճարումների ապահովման և ֆինանսական հաշվետվության կազմման համար: Հաշվապահի ֆինանսական վարձատրությունը կլինի ներդրում ՀԿ-ի կողմից (*CV-ին կցված է*):

Ծրագրի օգնական՝ Միեր Նաղդալյան, ունի 7 տարվա աշխատանքային փորձ՝ ընդգրկված լինելով հետևյալ աշխատանքներում՝ օպերատոր, հոգեբանական գնահատում, աշխատանքների կազմակերպում և այլն: 2020թ-ին ստացել է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը: Ունի մեծ փորձառություն երեխաների հետ աշխատելու, սոց հարցումների արդյունավետ կազմակերպման, հարցաթերթիկների ճիշտ ուղղվածության մշակման գործում:

Ծրագրում պատասխանատու է լինելու ծրագրի լոգիստիկ մասին՝ պայմանագրերի կնքում, ծրագրի գործողությունների վերաբերյալ գրությունների, հրավերների պատրաստում և ուղարկում, սոցիալական կայքերում ծրագրի գործողությունների և արդյունքների վերաբերյալ ինֆո նյութերի պատրաստում, սոցիալական հարցման հարցաթերթիկների կազմում և դպրոցներին աջակցություն հարցումների իրականացման ընթացքում, այլ նմանատիպ կազմակերպչական գործառույթներ *(CV-ին կցված է)*:

Ծրագրի շրջակա միջավայրի փորձագետ՝ Աննա Թութունջյան, տեխնիկական գիտությունների թեկնածու, ունի 12 տարվա աշխատանքային փորձ բնապահպանության և կրթության ոլորտում: 2009-2017թթ-ին աշխատել է ԵՊՀ Քիմիայի ֆակուլտետի "Էկոլոգիական քիմիա" ամբիոնում որպես ավագ լաբորանտ-գործավար: Աշխատանքի և հետազոտությունների բնագավառն է՝ շրջակա միջավայրի մոնիտորինգ, գնահատում, ջրային ռեսուրսների պահպանություն: 2001-2006թթ-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի էկոլոգիական քիմիայի բաժինը, որից հետո նույն ամբոնիում ստանձնել է հայցորդություն: 2013թ-ին պաշտպանել է «ՀՀ հարավային ջրավազանային կառավարման տարածքի որոշ ստորերկրյա և մակերևութային ջրերի որակի հետազոտություն» թեմայով թեկնածուական ատենախոսությունը և ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը: Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի «Շրջակա միջավայրի կառավարում» երիտասարդական 2006թ-ի մրցույթի դափնեկիր է: 2020թ-ից մինչ օրս ընդգրկված է «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրերում որպես շրջակա միջավայրի փորձագետ:

Ծրագրում պատասխանատու է լինելու ջրային ռեսուրսների գլոբալ էկոլոգիական խնդրի վերաբերյալ տեղեկատվական նյութերի, անիմացիոն պրեզենտացիայի և էլեկտրոնային տարբերակով վիկտորինա-խաղի պատրաստման, ջրային ռեսուրսների էկոլոգիական ուղղվածությամբ ժամանցային էկո-կրթական խաղի բովանդակության մշակման, ինչպես նաև «Ջուրը մեր կյանքում» և «Օգնենք Սևանա լճին» թեմաներով վեբինարների իրականացման համար *(CV-ին կցված է)*:

Ծրագրի ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ՝ Ալեքսանդր Առաքելյան, տեխնիկական գիտությունների թեկնածու է, ունի 15 տարվա աշխատանքային փորձ բնապահպանության ոլորտում: Նրա մասնագիտացումը հիդրոլոգիա, ԱՏՀ վերլուծություն և

մոդելավորում, ջրային ռեսուրսների կառավարման պլանավորում, բնապահպանական հետազոտությունների, ինչպես նաև ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցությունների աղետների ռիսկի գնահատման ոլորտներում է: Նա ներգրավված է եղել և մինչ օրս մասնակցում է Հայաստանում, Տաջիկստանում և Ղրղզստանում ավելի քան 30 պետական և դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերում: Ալեքսանդր Առաքելյանը ներգրավված է եղել Ախուրյանի, Հարավային, Արարատյան և Սևանի ջրավազանային կառավարման պլանների մշակմանը, ինչպես նաև մասնակցում է CEPA համաձայնագրից բխող ՀՀ-ում ջրային ռեսուրսների կառավարումը Եվրամիության պահանջներին մոտարկման աշխատանքներում:

2018-2020թթ-ին ընդգրկված է եղել Սևանի ջրավազանային կառավարման տարածքների ուսումնասիրման, էկոլոգիական վիճակի գնահատման, կառավարման պլանների ԵՄ ստանդարտներին համահունչ մշակման և լճի էկոհամակարգի վերականգնման միջոցառումների իդենտիֆիկացման աշխատանքներին: 2020թ-ին մասնակցել է Սևանա լճի ջրհավաք ավազանում կեղտաջրերի մաքրման կայանների վիճակի գնահատման և արդի տեխնոլոգիաների ներդրման հետազոտության աշխատանքներին:

Ծրագրում որպես ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ պատասխանատու է լինելու Սևանա լճի հիմնախնդրի ու արդի գիտական լուծումների վերաբերյալ էկո-տեղեկատվական նյութի, պրեզենտացիայի պատրաստման, Սևանա լճի հիմնախնդրի նորարարական լուծումների և պահպանության թեմայով սեմինարի իրականացման համար, ինչպես նաև ներգրավված է լինելու ջրային ռեսուրսների էկոլոգիական ուղղվածությամբ ժամանցային էկո-կրթական խաղի բովանդակության մշակման աշխատանքներում *(CV-ին կցված է)*:

Ծրագրի կայուն գյուղատնտեսության փորձագետ՝ Դավիթ Մեջլումյան, գյուղատնտեսության գիտությունների թեկնածու է: Նրա փորձն ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, ջրախնայողության, կայուն գյուղատնտեսության, հողօգտագործման և մելիորացիայի ոլորտում է: Որպես Կայուն գյուղատնտեսության փորձագետ ներգրավված է ոռոգման ոլորտի բարելավմանն ուղղված մի շարք ծրագրերում և գործողություններում՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ոռոգման արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև մասնակցում էՀՀ-ում գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործման ուսումնասիրություններին, դրանց արդյունավետության համար իրավական, նորմատիվ փաստաթղթերի մշակմանը:

Ծրագրում պատասխանատու է լինելու ջրախնայող տեխնոլոգիաների, ոռոգման խելացի համակարգերի և նորարարական լուծումների մասին տեղեկատվական նյութերի, պրեզենտացիաների պատրաստման ու սեմինարի իրականացման համար, ներգրավված է լինելու էկո-կրթական խաղերի բովանդակության մշակման աշխատանքներում *(CV-ին կցված է)*:

Կայքի ադմինիստրատոր՝ Հրայր Զոհրաբյան, ծրագրավորող, վեբ ադմինիստրատոր, JavaScript-ի լրիվ ստանդարտ մշակող: Ունի 6 տարվա աշխատանքային փորձ ծրագրավորման, վեբ ադմինիստրատորի, Web ծրագրավորում՝ HTML, CSS, Bootstrap, JavaScript,, SP Google Products, Microsoft Inc. ծրագրավորման ոլորտում:

2016թ-ին ավարտել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի բաժինը, սակայն զուգահեռ սովորել և զբաղվել է ծրագրավորմամբ: 2015թ-ին ավարտել է Microsoft Innovation կենտրոնի Վեբ ծրագրավորման դասընթացները (HTML, CSS, Java Script), իսկ 2016թ-ին Basic IT կենտրոնում HTML, CSS, Java Script, jQuery, PHP, OOP, MySQL ծրագրավորման դասընթացները և ստացել համապատասխան հավաստագրեր: Սովորաբար օգտագործում է ReactJS-ը Redux-ով "front-end"-ի մշակման համար, իսկ "back-end"-ի համար օգտագործում է

NodeJS-ը՝ express-ով: Հատկապես մասնագիտացված ReactJS-ում: 2020թ-ին պատրաստել է «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ի կայքը՝ www.envhealth.am

Ծրագրում պատասխանատու է լինելու վեբ կայքում (www.envhealth.am) և սոց ցանցերում (https://www.facebook.com/EnvandHealth) ծրագրային գործողությունների լուսաբանմանը: Ակտիվ ներգրավված է լինելու առցանց խաղերի կազմակերպման տեխնիկական բոլոր աշխատանքներին, օժանդակելու է վեբինարների կազմակերպման տեխնիկական մասի ապահովման *(CV-ին կցված է)*:

Ծրագրի խորհրդատու՝ Նաիրա Ասլանյան, ունի 17 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ որպես ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատման, հարմարվողականության փորձագետ: 2003թ.-ից ընդգրկված է UNDP, UNDP/GEF, USAID մի շարք բնապահպանական ծրագրերում՝ ուղղված կջրային ռեսուրսների կառավարմանը, կլիմայի փոփոխության ներքո ջրային ռեսուրսների հարմարվողականության միջոցառումների մշակմանն ու իրականացմանը, ինստիտուցիոնալ հենքի խթանման և այլ ծրագրերում: Ընդգրկված է եղել Հարավային ջրավազանային կառավարման պլանի մշակման, Կլիմայի փոփոխության ազգային 1-ին, 2-րդ և 3-րդ զեկույցների կազմման աշխատանքներին, ինչպես նաև ջրային ռեսուրսների հարմարվողականության ծրագրի մշակման միջոցառումներում:

Սովորել է ԱՄՆ Բրաունի համալսարանում և ստացել «Շրջակա գիտությունների» որակավորում: Վերապատրաստվել է նաև Կենտրոնական Եվրոպական համալսարանում (Հունգարիա) և Ասիական աղետների պատրաստման կենտրոնում (Թաիլանդ):

Որպես ծրագրի խորհրդատու և հրավիրված փորձագետ ծրագրում կօժանդակի թեմատիկ տեղեկատվական փաթեթի կազմմանը, մանկավարժների համար սեմինարների կազմակերպմանը, ինչպես նաև կաջակցի «Սևանը ես եմ» մրցույթի իրականացման և հանձնաժողովի ձևավորման աշխատանքներին (*CV-ին կցված է*):

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

NN ը/կ	«««Երիտասարդների կարողությունների հզորացում՝ ուղղված Սևանա լճի պահպանությանը»						
	անվանումը	բովանդակությունը	Կազմակերպության կողմից կատարման	ակնկալվող արդյունքները և	Միջոցառման իրականացման	Հաշվետվության ներկայացմ	պահանջվող գումարը (դրամ)

			ենթակա գործա-ռույթների նկարագիրը	դրանց գնա-հատման չափանիշները	վերջնաժ ամկետը	ան կարգն ու ժամկետը	
	«Երիտա սարդներ ի կարողու թյուններ ի հզորացու մ՝ ուղղված Սևանա լճի պահպան ությանը»	Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել երիտասարդությ ան շրջանում գիտելիք-ներն ու կարողու-թյունները Սևանա լճի էկոլոգիական խնդրի վերաբերյալ, դրանով իսկ խթանելով երիտա-սարդների ակտիվ ներգրավվածությունը լճի էկոհամակարգի վերականգնման գործողություններում: Ծրագիրն ուղղված է՝ տեղական և ազ-գային մակարդա-կով միավորելու երիտասարդներին Սևանա լճի էկոհա-մակարգի վերա-կանգնման շուրջ, հանրության լայն շրջանակի համար ներկայացնելու	Սևանա լճի հիմնախնդրի վերաբերյալ կմշակվեն տեղեկատվական նյութեր և կկազմակերպվեն թեմատիկ վեբինարներ և սեմինար-քննարկումներ՝ նվիրված ջրային ռեսուրսների և Սևանա լճի հիմնախնդիրների նկարագրությանը: Վեբինարների նյութերը պատրաստված կլինեն անիմացոն պրեզենտացիաների տեսքով, որին կհետևի առցանց վիկտորինա-խաղի կազմակերպումը: Բացի այդ, մասնակիցների համար	• Մինչև 5 թեմատիկ վեբինարներ, սեմինար քննարկումներ և օնլայն խաղի ներկայացում • Նվազագույնը 50 վեբինարների մասնակից • Տեղեկատվական նյութերի 1 փաթեթ • Անիմացիոն վիկտորինա-խաղ պրեզենտացիա • էկո-կրթական ժամանցային 1 խաղի գրաֆիկական կոմպոզիցիա	Հոկտեմբերի 15-դեկտեմբերի 13	Կատարված աշխատանքների նկարագրություն, վեբինարների նկարներ, մասնակիցների ցանկ, տեղեկատվական նյութերի և խաղի օնլայն տարբերակների հանձնում, սոց հարթակում հրապարակումների հղումները: Հաշվետվությունը կներկայացվի մինչև դեկտեմբերի 15-ը՝ էլեկտրոնային տարբերակով:	1 260 000

		լճի հիմնախնդիրը ու միջազգային փորձի վրա հիմնված լու-ծումներ, ինչպես նաև միացյալ ձեռ-նարկել լճի էկոհա-մակարգի վերա-կանգնմանն ուղղ-ված միջոցառում-ներ: Ծրագրի ըն-թացքում կմշակվեն տեղեկատվակա ն նյութեր, արդի լուծումների, ջրախ-նայող տեխնոլո-գիաների և նորա-րարական լուծում-ների վերաբերյալ ուղեցույց, էկո-կրթական ժաման-ցային խաղի վի-զուալ կոմպոզիցիա, էլեկտրոնային վիկտորինա-խաղ, պրեզենտացիա ներ: Կիրականացվե ն վեբինարներ, քննարկումներ ՀՀ մարզերի դպրոց-ների 7-11-րդ դասա-րանների	կպատրաստ վի էկո-կրթական ժամանցայի ն խաղի գրաֆիկակա ն կոմպոզիցի ա, որի տպագիր տարբերակը ևս կտրամադրվ ի: Վերջինիս օգնությամբ մասնակիցն երը ինարավորու թյուն կունենան դպրոցում ազատ ժամերին խաղալ և սովորել ջրային ռեսուրսների պահպանութ յան վերաբերյալ: ՀՀ մարզերի երիտասարդ ներին մեկ գաղափարի և նպատակի (Սևանա լճի պահպանութ յան) շուրջ համախմբել ու նպատակով վեբինարներ ին միևնուն ժամանակ մասնակցութ				

		աշակերտ-ների և ուսուցիչների համար: Ծրագրի ավարտին կկազմա-կերպվի	յուն կունենան տարբեր մարզերի և դպրոցների մասնակիցներ:				
		«Սևանը ես եմ» խորագրով պաստառների և ֆոտոկոլաժների մրցույթ դպրոցա-կանների համար: Ծրագրի ողջ ընթացքում սոց ցանցերում լայնորեն կլուսաբանվեն ծրագրային բոլոր գործողությունները:	ՀՀ մարզերի աշակերտների համար կկազմակերպվի «Սևանը ես եմ» խորագրով մրցույթը: Կմշակվի մրցույթի հայտարարությունը, մասնակցության կարգը, ընտրության չափանիշները, հանձնաժողովը: Մրցույթի վերաբերյալ տեղեկատվությունը կտարածվի սոց հարթակներում և բաց բոլոր ցանկացող դպրոցների համար: Մրցույթի մասնակիցները պետք է	• «Սևանը ես եմ» մրցույթի կազմակերպում և իրականացում: • Մրցանակաբաշխություն (օնլայն տարբերակով)	Նոյեմբերի 10-դեկտեմբերի 13	Մրցույթի վերաբերյալ հաշվետվություն, որը կներառի մրցույթի հայտարարությունը, ստացված հայտերը, գնահատման արդյունքների ամփոփումը, մրցանակաբաշխության նկարագրությունը, սոց հարթակում հրապարակումների հղումները: Հաշվետվությունը կներկայացվի մինչև դեկտեմբերի 15-ը՝ էլեկտրոնային տարբերակով:	780 000

			պատրաստ են պաստառնե ր և/կամ ֆոտոկոլաժ ներ նվիրված Սևանա լճի հիմնախնդր ին և կներկայաց նեն մրցույթային հանձնաժող ովին: Մրցույթայի ն հայտերի դիտարկմա ն ժամանակ խրախուսա կան կդիտվի վեբինարնե րից հետո դպրոցներու մ սեփական նախաձեռն ություններո վ նմանատիպ բաց դասերի կազմակեր պումը: Մրցույթի հայտերը կտեղադրվե ն սոց հարթակնե րում՝ հանրությա ն քվերակությ ան համար: Մրցանակա				

			բաշխության արդյունքում հանձնաժողովի գնահատմամբ կողմից կորոշվի մրցույթի հաղթողը/նները:				
	Ընդամենը 2 040 000						
	ԱԱՀ՝ 408.000						
	Ընդամենը՝ 2,448.000						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ ք.Երևան,
Բագրատունյաց 28, 51 բն. liana_margaryan@yahoo.com

բանկ՝ Հայէկոնոմբանկ/ճ հասցե՝

Գարեգին Նժդեհի 28

Հ/Հ163018361564, ՀՎՀՀ0225154

ՀԿ-ի ղեկավար՝

Լիանա Մարգարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 2
15.10.2021թ. ԱՐՊՄ-09
Հրամանի [illegible] [illegible]

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու *«Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ*
Ծրագրի անուն *«Երիտասարդների կարողությունների հզորացում՝*
ուղղված Սևանա լճի
պահպանությանը»

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Համաֆինանսավորվող գումարը (ՀՀ դրամ)	Ընդհանուր Պահանջվող և Համաֆինանսավորվող գումարները
	Աշխատավարձ						
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**						
1.1	Ծրագրի համակարգող	ամիս	2	140000	280000		420000
1.2	Ծրագրի հաշվապահ	ամիս	2	120000		240000	240000
1.3	Ծրագրի շրջակա միջավայրի փորձագետ	ամիս	2	140000	280000		420000
ha	Ծրագրի կայուն գյուղատնտեսության փորձագետ	ամիս	2	140000	280000		420000
1.5	Ծրագրի ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ	ամիս	2	140000	280000		420000
1.6	Ծրագրի համակարգողի օգնական	ամիս	2	80000	160000		240000
1.7	Կայքի ադմինիստրատոր	ամիս	1	140000	140000		140000
Ընդամենը Ա							**1 660 000**
Բ	**Ծրագրային ծախսեր**						
2.1	Էկո-կրթական ժաման-ցային խաղի վիզուալ կոմպոզիցիայի ստեղծում, գրաֆիկական դիզայն	քանակ	1	620000	620000		620000

	և իլուստրատոր ծրագրով խաղի իրականացում:						
2.2	Խաղի տպագրություն	հատ	25	3700		92500	92500
2.3	Տեղեկատվական նյութերի տպագրություն	փաթեթ	1	12500		12500	12500
2.4	Գրենական պարագաներ և մրցանակներ մրցույթի մասնակիցներին/հաղթողին	փաթեթ	1	120000		120000	120000
Ընդամենը Բ							**845 000**
Գ	**Գործուղում**						
3.1	Շրջայց մարզերի դպրոցներ	անգամ	1	180000		180000	180000
Ընդամենը Գ							**180 000**
Ընդամենը					**2 040 000**	**645 000**	**2 685 000**
ԱԱՀ					**408 000**		
ԸՆԴԱՄԵՆԸ					**2 448 000**		

ՀՀ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**		
1.1	Ծրագրի շրջակա միջավայրի փորձագետ	280000	Վարձավճարի միավորի արժեքները տրված են համաձայն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության նախարարի 25.03.2019թ թիվ 50-Ա-1 հրամանի: Կից տրված են ստորագրված ծրագրում ներգրավվածության համաձայնությունները: Յուրաքանչյուր փորձագետի աշխատանքների նկարագրությունը տրված է հայտի ծրագրի աշխատակազմ բաժնում:
1.2	Ծրագրի կայուն գյուղատնտեսության փորձագետ	280000	
1.3	Ծրագրի ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ	280000	
1.4	Ծրագրի օգնական	160000	
1.5	Կայքի ադմինիստրատոր	140000	
Ա2	**Ղեկավար անձնակազմի աշխատավարձ**		
1.1.1	Ծրագրի համակարգող	280000	Վարձավճարի միավորի արժեքները տրված են համաձայն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության նախարարի 25.03.2019թ թիվ 50-Ա-1 հրամանի: Կից տրված է ստորագրված ծրագրում ներգրավվածության համաձայնությունը: Աշխատանքների նկարագրությունը տրված է հայտի ծրագրի աշխատակազմ բաժնում:
Ա2		**Ընդամենը**	280 000
Ա		**Ընդամենը**	1 420 000
Բ	**Ծրագրային ծախսեր**		

2.1	Էկո-կրթական ժամանակ-ցային խաղի վիզուալ կոմպոզիցիայի ստեղծում, գրաֆիկական դիզայն և իլուստրատոր ծրագրով խաղի իրականացում:	620 000	Համաձայն հավելվածում կցված նվազագույն գնառաջարկի՝ "Անաշեհ Հաղվերդյան" ԱՁ
Բ		Ընդամենը	620 000
Ընդամենը			
ԱԱՀ			2 040 000
ԸՆԴԱՄԵՆԸ			408 000
			2 448 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3 Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ
ք.Երևան, Բագրատունյաց 28, 51 բն.
liana_margaryan@yahoo.com

բանկ ՝ Հայէկոնոմբանկմ/ճ հասցե՝
Գարեգին Նժդեհի 28
Հ/Հ163018361564, ՀՎՀՀ0225154
ՀԿ-ի ղեկավար՝

Լիանա Մարգարյան

/ստորագրություն/

Կ.Տ.